ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման և կացարաններ տեղափոխման աշխատանքները.
2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
3) իրականացնում է Երևանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների աշխատանքների վարմանը:
4) սահմանված կարգով տրամադրում է թույլտվություններ կենդանիների բուծարաններին և կացարաններին.
5) սահմանում է Երևանի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը՝սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և իր իրավասության սահմաններում դրանց հաստատում:
2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում:
3) կենդանի տիրապետողից պահանջում է կենդանի պահելուն առնչվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ, փաստաթղթեր:
4) կազմում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտումների արձանագրություններ:
5) խախտումների մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է իրավապահ մարմիններին, միաժամանակ ձեռնարկում է միջոցներ իրավախախտումը կանխելու համար»:

Հոդված 96. Վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները առևտրի և սպասարկման բնագավառում

1. Վարչական շրջանի ղեկավարը առևտրի և սպասարկման բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները.

1) վարչական շրջանի տարածքում, առևտրի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն.

2) վարչական շրջանի տարածքում, սպասարկման գործունեության համաքաղաքային կանոններին համապատասխան, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի օբյեկտներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն.

3) վարչական շրջանի տարածքում, հանրային սննդի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

«4) վարչական շրջանի տարածքում, համաքաղաքային կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն

5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն»: